ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Հետազոտական աշխատանք հայ գրականությունից

Շահան Շահնուրի պատմվածքների ուսուցումը ավագ դպրոցում

Կատարող՝ Օվսանա Լևոնի Ղարիբյան
Ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը - կատարել Շահան Շահնուրի պատմվածքների համեմատական վերլուծություն, վերլուծել կերպարները համաժամանակյա և տարաժամանակյա կտրվածքով, կարողանալ ընդգծել պատմվածքների արդիականությունը, զարգացնել սովորողների մոտ կերպարները վերլուծելու և զարգացնելու կարողությունը:

Շահան Շահնուրը (Շահնուր Թերեսքեճյան) սփյուռքահայ գրականության սկզբնավորողներից և ականավոր դեմքերից մեկն է:
Հեշտ չի եղել Շահնուրի գեղարվեստական-հրապարակախոսական որքան բարդ, այնքան էլ հակասական ժառանգության գնահատումը: Նա ինքը հասկանում էր, իր նկատմամբ ներողամտություն չէ ցուցաբերվելու, քանի որ լինելով քչերից մեկը, փորձում էր բուն իրականությունից *ավելի արագընթաց դառնալ* թե իր դատողություններում, թե գնահատումներում.<<**Ուզեցի զգալ հովեն արագ,ուզեցի երգել ջուրեն ավելի բարձրաձայն, որովհետև ուզեցի մտածել լույսեն ավելի շուտ և գալարվեցա հրաբխային ընդերքներե ավելի>>**:(Շ.Շահնուր, <<Ավագ ուրբաթ>>, Զվարթնոց,N 8 Փարիզ, 1930, էջ 341):
Իր <<Նահանջը առանց երգի>> վեպով նա առաջինն ահազանգեց սփյուռքահայերի ձուլման վտանգի մասին, նույն սթափ հայացքով շարունակեց արծարծել հայության ճակատագրի հարցերը նաև <<Հարալեզներուն դավաճանությունը>> պատմվածքների ժողովածուում:
Ինքը՝ սփյուռքը, բարդ օրգանիզմ է: Թեև շատ հաճախ այդ մեկ հատիկ բառի մեջ ենք ամփոփում բուն հայրենիքից դուրս գտնվող ողջ հայ տարրը, սակայն իրականում այն բազմադեմ է, տարաբնույթ, հաճախ՝ հակասական: Մեկ միասնական տարր չէ սփյուռքը ոչ իր մշակութային ու լեզվական շրջանակներով,ոչ տնտեսական ու կրթական զարգացածության աստիճանով, ոչ քաղաքակրթական մակարդակով, ոչ էլ ազգային խնդիրների իրականացման իր ընտրած ուղիներով: Ահա այս իրողությունների հենքի վրա 20-ական

թվականներին ստեղծվում էր մի գրականություն, որը միատարր չէր.աղետի զավակները ստիպված էին վերանայել կյանքի նկատմամբ իրենց ունեցած պատկերացումները, ինչը նաև <<տարօրինակ>> մեկնությունների էր մղում նրանցից ոմանց:

Եղեռնի ճիրաններից հրաշքով փրկված արևմտահայ գրականության վերջին սերնդի և սփյուռքահայ նոր սերնդի մի շարք գրողներ ազգային փրկության և ինքնահաստատման որոնումներում իրենց հայացքը հառում էին անցյալի ավանդների և արժեքների վերակենդանացման միջոցներին՝ փորձում կորսված եզերքի, խորխորատներում հոսող գետերի ու երկնամերձ լեռների կարոտներով ապրեցնել <<իրենցներին>>: Հիշատակ-երազ կցորդումը այդ գրականության հիմնական էությունն է: <<Հոն կյանքն իմաստուն էր, և օրերը հարուստ էին…Մարդիկ կապրէին իրարու հետ՝ ներդաշնակ ու խաղաղ…>>,- գրում էր Վ.Շուշանյանը: (*<<Ցայգերգ>>,<<Հայրենիք>> ամսագիր, Բոստոն, 1925, Գ տարի, N 12):*

Ի հակադրումն այն գրողների, ովքեր այդ քաղցր հուշերով էին ապրում,Շահնուրը նախընտրում է համընթաց քայլել օրերի հախուռն խնդիրներին ու հույզերին, մերժում է բողոքի այն հայեցողական ձևը, որ կառուցված էր *հայրենի եզերքի չգոյության վրա՝* փոխարենը առաջադրելով ինքնասթափման ու ուժի գաղափարախոսությունը և <<կաղապար դարձած վիճակից>> շուտափույթ հրաժարումը: <<Սիրել մարդկանց և սիրել հողը>> պատվիրանը , որ կարոտի գրականության հիմնական նշանաբանն էր, մնալով հանդերձ արդիական,այնուամենայնիվ, կյանքի նվազ լիցքեր էր պարունակում:Մերժվածների, հեզերի, խեղճերի կերպավորումները նոր ժամանակներում միայն հուսալքման էին մղում ընթերցողներին, իսկ բարության, ազնվության պատգամները արդեն վաղուց արհամարհված արժեքներ էին աշխարհի աչքին:

Գրականության մեջ զգայականի, երևակայականի փոխարեն Շահան Շահնուրը առաջադրում է *իմացականը,* ինչը արվեստի ճանապարհով պետք է սթափեցման տանի ժողովրդին,ընդ որում նման գրականությունը պետք է ստեղծվի ցնցվելու ու ցնցելու ճանապարհով: <<Կարևորը այն չէ,թե հեղինակը ինչ բան կը դնէ իր ընթերցողին բերնին մէջ-մե՞ղր, թէ քացախ, ժպի՞տ թէ արցունք,այլ անոնց iosage- ը(խառնուրդը), որ պետք է բերնին մէջ թողու ,վերջ

ի վերջոյ, աղի-լեղի համ մը>>,- գրել է Շահնուրը Գ.Քեոսեյանին ուղղված իր 15 սեպտեմբերի 1967 թվակիր նամակում: (Շ.Շահնուր, <<Նամականի>>, <<Մայրենի>> հրատարակչ., էջ 75):

Շահնուրը տեսնում էր, որ հայության հավաքականությունը վեր է ածվում անհատների, մարում է այն ուժը, որ վաղվա երգը պետք է հնչեցներ, տեղի են տալիս <<ազգը վեր բռնող>> գործոնները՝ հայ ընտանիքը,հայ լեզուն, հայ նկարագիրը: Ըստ էության սփյուռքահայությունը չէր փրկվել ամենակուլ եղեռնից,որն այս անգամ գալիս էր սպիտակ ջարդի՝ այինքն՝ հոգևոր ամլացման տեսքով, ինչը շատ ավելի համատարած էր, քան կարմիր ջարդը և *իր մեջ էր առնում բոլորին ու ամեն ինչ*:

Իսկապես, մի՞թե հոգևոր ձուլումը ավելի սարսափելի չէր իր հետևանքներով, քան ֆիզիկական կործանումը: Վերջինը միշտ էլ ծնում է ընդդիմության ոգի, որը ապրեցնող ազդակ է, մինչդեռ առաջինը վերջնական մարման է հանգեցնում, որը ամայացնում է ետդարձի բոլոր ուղիները:

Շահնուրի համար երկրորդական նշանակություն ունեին կյանքի շատ հարցեր, քանի որ ամենքի առջև ծառացել էր գերագույն խնդիրը՝ Նահանջը: ՈՒ նա պիտի գրեր, որ նոր ժամանակներում ոչ թե պատերազմ կա ու կռիվ, այլ <<...կայ բան մը աւելի ճակատագրական, աւելի անններող,կայ բան մը ահեղ, անդիմադրելի, որ իր անունը կըոռնայ բոլոր քառուղիներէն.նահանջ է ան: Նահանջը, նահանջը Հայերուն>>:(*Շ.Շահնուր, <<Նահանջը առանց երգի>>, Պեյրութ 1981, էջ `123*): Օտարության գիրկը ընկած մարդու համար այլևս դժվար էր դառնում մատնանշել հայրենիքը:Թերևս այն կոչվում էր *այլուր*: Ամեն հայ գաղթական ասես կրկնում էր շահնուրյան խոսքերը՝ <<...կը քալեմ՝ առանց հառաջանալու...կը ծռիմ, կը ծռիմ, կը ծռիմ>>: Այդ գաղթականը առանձնանում է նրանով, որ սփյուռքը նրա համար դառնում էր բնական մի բան, հարազատ մի վայր և ոչ թե ժամանակավոր կացարան. <<Գաղթականը կը ներգաղթէ, Սփիւռքը՝ ոչ: Հոս է մեր ազգային վէրքը>>: Շահնուրն այն համոզմունքն է հայտնում, որ հայ գրողի համար կյանքի ցանկացած ոլորտի մարմնավորում պետք է ուղղված լինի ազգային հատկանիշներ արթնացնելուն. <<Գոյություն չունի , գոյություն պետք չէ ունենա հայուն փրկութենեն դուրս որևէ բան>>,- գրել է նա <<Մենք>> հոդվածում: ԵՎ գրողը երևույթին գեղարվեստական ձև ու մարմին տվեց՝ ստեղծելով հանճարեղ գործեր:

Ծ.Շահնուրի փոքրածավալ գործերը ըստ էության վեպում արծարծված մտահոգիչ գաղափարների շարունակությունն են: Ինչպես վեպի պարագայում, այնպես էլ պատմվածքի ժանրում Շահնուրը նկարագրական պատումի փոխարեն բերում է *մտածումի գրականություն*, ստիպում ընթերցողին ոչ միայն ազգային ինքնասիրության վիրավորվածություն զգալ, այլև խորհել, մտատանջվել ու կասկածի ենթարկել սրբացված շատ արժեքներ: (Ա.Ավագյան, <<Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, էջ 123):

Շահնուրի պատմվածքները կարելի է տրոհել երեք մասի՝ Պոլսի կյանքի ընդգրկումներն ու տիպերը՝ դիտված մեղմ երգիծական դիրքերից (<<Առավոտյան շեփոր>>, <<Հոսանքին եզրը>>, <<Մանուկ մը տարեցներուն մեջ>>), խոհական և դատողական խտացումներ արտահայտող ազգային հարցադրումներ (<<Ավագ ուրբաթ>>, <<Պույնուզլը>>ները>>, <<Հարալեզներուն դավաճանությունը>>), սփյուռքը՝ իր վարընթացով ու նոր դրսևորումներով (<<Զաթոսթե>>, <<Դերձակ մը, իր երկու հյուրերը և զանազան դեպքեր>>, <<Պճեղ մը անուշ սիրտ>>, <<Լյուքսեմբուրգի պահապանը>>):
Իրենց ընդհանրության մեջ Շահնուրի պատմվածքներն այլ բան չեն, եթե ոչ հաստատումը մեր կյանքի սև ու սպիտակ՝ տգեղ ու գեղեցիկ կողմերի և իրենցով փոխանցում են ոչ միայն մի կորուսյալ աշխարհի վարքն ու բարքը, այլև *ինքնաճանաչման* են մղում ընթերցողներին: Պատմվածքների մեծ մասը երգիծական ու ողբերգական իրողություններ պատկերող գործեր են, <<լա՞ս, թե՞ խնդաս>> հարցման պատասխաններ, որոնք միևնույն ժամանակ թախիծ ու կարոտ են առաջացնում:
<<Պճեղ մը անուշ սիրտ>> պատմվածքը <<Հարալեզներուն դավաճանությունը>> ժողովածուի նախավերջին գործն է: Գրողը սկզբից ևեթ իր ընթերցողին առնչում է հայ ճակատագրի ու ազգային ցավի հետ: Պատմվածքի հերոսուհու արտաքին նկարագիրն իր մեջ խտացնում է շատ բան: Հասատամարմին մայրիկի՝ Եպրաքսե հանմի հագուստի ու արտաքինի

գերակշիռ գույնը սևն է՝ սև վերարկու, սև հոնքեր, սև գլխարկ, սև ատամներ և...<<Հատ մըն ալ Հայու սև ճակատագիր>>:

Չնայած այդ մութ գույներին,Եպրաքե հանմը պայծառ հոգի է, հոգատար մայր և ուրիշի ցավին կարեկից անձնավորություն: Գրողը նրա կերպարը ստեղծելիս յուրահատուկ գեղարվեստական հնարք է օգտագործել:Նա անընդհատ դժգոհ է:Դժգոհ է իր որդիներից, այն երկրից, որտեղ ապրում է, գորգը մաքրելու տեղի բացակայությունից, տրամվայում հանդիպած անծանոթ հայ տղայից, պանդոկապետից, աշխարհի կարգերից ու իր բնակած <<գրպանի չափ>> սենյակներից, որ գտնվում են <<աշտարակի պես նեղ տան մը...գագաթը>>, ասել է թե՝ կյանքի ծայրին:Բայց այդ դժգոհությունների հիշատակումներում ու բնութագրումներում Եպրաքսեն միևնույն ժամանակ դրսևորում է անհուն մի սեր առ այդ ամենը, շրջապատն ու մարդիկ:

Թվում է, թե քիչ կապ կա Եպրաքսե հանմի և պատմվածքի մյուս հերոս Նորայր Կարապետյանի միջև:Մեկը անուն առ անուն գիտե իր դժգոհությունների պատճառները, մյուսը ակնարկ իսկ չի անում իր մահվան դրդապատճառի մասին:Բայց երկուսն էլ կյանքի իսկական ու մնայուն արժեքներ որոնողներ են, և երկուսն էլ դա ոչ մի կերպ չեն գտնում:

Գրողն իր հերոսուհու նկարագրում վարպետությամբ է պատկերում մորը բնորոշ մտածողությունն ու սրտացավությունը:Առաջին իսկ կռահումից, որ տրամվայում իր դիմացը հայ է նստած, նա պարզ մի անկեղծությամբ հարցնում է. <<Դուն Փառանձեմի տղան չե՞ս>>, և ապա. <<...դուն Մարզվանի՞ Կարապետյաններեն ես...Խասքէօյի...հարկավ՝ հայ ըլլալդ քիթեդ-բերնեդ կվազե կոր,հեմեն ըսի քի մեր արյունեն ես...>>: *(Ծ.Շահնուր, <<Պճեղ մը անուշ սիրտ>>, էջ 278):* Այնուհետև ծայր տված հետաքրքրությունների շարան՝ ինչու՞ մորն իր մոտ չի բերում, ճանաչու՞մ է արդյոք իր տղաներին,քույրը ամուսնացա՞ծ է, ճանաչու՞մ է Սեն Միշելի նպարավաճառին...Այլ խոսքով, մի քանի նախադասությունների մեջ խտացնում է իր, և, ըստ իրեն, ամեն մի <<իսկական հայի>> կյանքի <<բնական>> շրջանակը:Սակայն <<Հայ ըլլալը քիթեն-բերնեն վազող>> Նորայրը չի ճանաչում և ոչ մեկին, ժամ չի գնում ու սակավախոս մեկն է:

Եպրաքսե հանմի ու նրա որդիների հետաքրքրությունների զանազանությունը արդեն բնութագրում է սփյուռքի հին ու նոր սերունդների միջև առկա

տարբերությունը:Մեկը՝ խիստ ավանդապաշտ ու կայուն նիստուկացով,մյուսը՝ աղջիկների <<փեշերեն>> չզատվող:Բայց սա լոկ արտաքին տարբերությունն է: <<Քաղաքակիրթ>> աշխարհն իր հետքն է թողել ամեն ինչում: Նորայրը, ինչպես և Եպրաքսեի որդիները, արդեն <<երկայն վարտիք հագնիլը>> մեղք են նկատում, շատ հարցերում համակերպվել են ֆրանսիական օրենքներին և այլն: Շահնուրն առաջիններից էր, սփյուռքահայ գրականություն բերեց հերոսի նոր տիպար, որն այլևս ոչ դասական բարոյականությամբ օժտված մարդ էր, ոչ էլ նահատակի սրբապատկերը կրող ազատամարտիկը(*Ա.Ավագյան, << Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի>>, էջ 166*) : Կյանքի անբնական վիճակի մեջ գտնվող տարագիր մարդու ողբերգական ճակատագրի մարմնացումն է Նորայրը:Գրողը նրա տառապանքի բուն պատճառի մասին կոնկրետ բան չի ասում:Նրա ցավը ընթերցողին հասանելի է դառնում Եպրաքսե հանմի բնութագրական խոսքերի, իր որդիների շուրջ բացած խորհրդածությունների միջոցով:

Օտար կյանքը բնականորեն հունից դուրս էր մղել Նորայրին:Նա այլևս ոչ միայն չի ուզում ապրել, այլև, ինչպես գրում է Եպրաքսե հանմին հանձնված թղթում,չի կարող. <<Գիտցեք,որ Փարիզի մեջ... ոչ ոք ունիմ: Մարդ չունիմ: Ոչ ոքի սու մը պարտք ունիմ...>>: Նորայրը թեև իր նամակում <<բացատրում է>>, որ իր մահվան <<պատճառները բոլորովին անձնական են>>, սակայն փարիզյան կյանքի ակնարկումը այլ բան է հուշում: Գրողը միտումնավոր չի հստակեցրել ձևակերպումը: Կախման կետերը ասում են, որ այդ պատճառները շա՞տ-շա՞տ են՝ ծնողազուրկ վիճակ, անտարբեր միջավայր (<<...որու՞ն հոգն է...Ո՞վ որի...>>), օտարի վերաբերմունք, սոցիալական թշվառություն, հեռանկարի անորոշություն,սիրող սրտի բացակայություն, վերջապես՝ հայրենի եզերքի կարոտ: Եպրաքսե հանմի տասնյակ հարցումներին Նորայրը <<պատասխանում է>> լռությամբ:

Նորայրի մահը ընդհանրական բնույթ ունի բոլոր տառապյալ հոգիների համար: Այդ վախճանը խորհրդանշում է պետրոս-պիեռների վաղվա օրը,և այստեղ կարևոր չէ սպառման ձևը՝ ֆիզիկակա՞ն ,թե՞ բարոյական մահ:

Բնորոշ է, որ Եպրաքսե հանմը իրեն է մեղադրում Նորայրի մահվան համար.ինչպե՞ս ինքը չի հասկացել,որ նա պատրաստվում է ինքնասպան լինել:

Եպրաքսե մայրիկն ու նորայրը օտարներ չեն միմյանց, ինչպես կարծում է պանդոկապետը:Իրենք հարազատներ, նույն <<արիւնէն>> են, Եպրաքսեն <<շատո՛նց է, որ կը ճանչնար Նորայրը:Քանի՛ կիրակիներ եկեղեցին հանդիպած էր>>: Ֆրանսիացին ոչ մի կերպ չի կարող հասկանալ նրանց կապող ուժը (չէ՞ որ ֆրանսերենում չկա <<մեր որբը>>, <<մեր մայրը>>, <<մեր կարոտը>>), և անծանոթ կնոջ սրտի մորմոքները չափազանցություն են թվում նրան:

Չնայած որ Ծահնուրի պատմվածքներից մի քանիսը տխուր վերջաբան ունեն, այնուամենայնիվ, հեղինակը չի տարվում լալկանությամբ,այլ միշտ հումորի մի երակ ներկա է նրա խոսքում, որ ցրում է հոռետեսական տրամադրությունը, օգնում <<վաղվան հուսալու>>: Երբ թվում է, թե հուսահատության ու թմրության մեջ հայտնված Եպրաքսե մայրիկը Նորայրի մահվանից հետո այլևս անելիք չունի, հանկարծ սթափվում է ու <<գործունէութեան>> մղվում. <<…գնաց իր ծրարը քակեց և դուրս հանեց գորգը: Պիտի թօթուեր>>, որին հաջորդում է հաստամարմին կնոջ պատուհանից գրեթե դուրս ընկնելու զավեշտական, բայց խիստ իմաստալից տեսարանը, ինչով գրողն ուզում է ասել, որ փրկությունը <<գորգը թօթուէլու>>՝ այսինքն օտարությունից մաքրվելու մեջ է ու այդ <<գորգը>> անպայման պետք է մաքրել՝ անկախ հնարավորություններից ու վտանդներից:

<<Հարալեզներուն դավաճանությունը>> պատվածքի վերնագիրը շատ ընդգրկուն է, այնքան ընդգրկուն, որ գրողը դարձրել է իր գրքի խորագիրը: Այս պատմվածքը *մենախոսություն է* հայ կյանքի արևմտահայ ու սփյուռքահայ շրջաններն ապրած մարդու դառը ճակատագրի շուրջ: Տեսիլքը, երևակայությունն ու ազգային կացության ողբալի ներկան խառնված են այստեղ, ինչը հոգու ձայն է դառնում, աղաղակ, ինքնաորոնման ու ինքնահաստատման խոսք: Պատմվածքի հերոսը ողբերգական կերպար է: Նա լքված է ամենքի կողմից և <<մահվան կը ցանկա>>, բայց ոչ երբեք հուսալիք՝ <<պիտի կանգներ իր հասակին ամբողջ շքեղութեամբը>>:

Չկա հայ երկիրը, չկան և աստվածները:Ամենքը դավաճանել են, դավաճանել են և հարալեզները: <<Ես Անահիտը չեմ>>,- պատասխանում է Համբարձումին Արամազդի դուստրը, որ բարերարն ու խնամակալն է ազգի:Բայց ցավալին այնքան այդ չէ, որքան այն ,որ դավաճանում են նաև մարդիկ:Չկա սեր միմյանց

նկատմամբ և հավատ՝ ազգային փրկության նկատմամբ. <<Դաւաճանած են Յարալէզները, եւ արարածը կը կոչուի պարզապէս մարդ>> (էջ 197):
Ինչու՞ են դավաճանել հարալեզները: Այս հարցին պատասխանում են ոչ միայն նույնանուն պատմվածքը, այլև գրքի մյուս վեց գործերը:ԵՎ կարևոր չէ՝ գրողը <<մեռյալ>> քաղաքի՝ Պոլսի, թե՞ <<քաղաքակիրթ>> Փարիզի հայության կյանքն է ներկայացնում:Երկու դեպքում էլ հայությունը շարունակում է նույն թմբիրի մեջ մնալ, կառչել ուժերի, որոնք անզոր են ու իրական չեն:<<Էրգրում>> հայը տանուլ էր տվել իր ֆիզիկականը, մայր հայրենիքում՝ ազգային ու հոգևոր արժեքները , սփյուռքում այդ ամենը միասին էր կորսվում:
Ամենուր <<հով կայ>>, ու մարդիկ <<անհետացեր են անհիմն զրոյցներու պէս սա կողկողաձայն մութին մէջ...>> (էջ 46):Ահաբեկված այդ մարդկանց մի ծվենն է լքված տղան՝ պատմվածքի հերոսը՝ Ատնա-Ժագոն, բուն անունով՝ Համբարձումը: Հանձին հերոսի ցավաշատ ճակատագրի՝ Շահնուրը ներկայացնում է հայոց կործանաշատ ճանապարհը:Մի ճանապարհ,որ անընդհատ վարընթացի ուղի է եղել, մահվան ու սպառնալիքի անվերջ ոլորան, որը տարել է ազգային ջախջախման ու հոգնության:
Համբարձումը <<իր արիւնոտ արեւելքեն>> եկել է մինչև <<ծայրագոյն արեւմուտք>>, սակայն ոչինչ չի փոխվել նրա կյանքում,ամեն ինչ նույնն է. <<Ես ուզեցի քեզ գտնել այն ճամբուն վրայ,որ երեք անգամ կը բարձրանայ,հոգ չէ, թե տեղ մը չի տանիր: Եւ ահա քեզ կը գտնեմ ճամբու մը վրայ, որ թեև տեղ մը չի տանիր, բայց որ երեք անգամ կը ցածնայ>> (ընգծումը Ա.Ա.,էջ 182):
Ամենքը <<դարձեալ փոթորիկին տակ են>>, <<նորեն սպառնալիքին մօտ, միս-մինակ>>:Շուրջբոլորը մահ կա, վերացել են մարդկանց վեր պահող ուժերը: Համբարձումը, փնտրելով աստվածներին, հասնում է դատարկության ճամփին: Շահնուրի հերոսը թեև նահանջի վարընթացի մեջ է, նման այն հային, որի <<հույսը հալեցավ հանձնված բերդաքաղաքի հետ>> (<<Նահանջը...>>), սակայն նա փնտրում է ելման ուղիներ: <<Ես, իմ անցեալէս բարձր>> կարգախոսը նրա համար ոչ միայն ապրելու կռվան է, այլև վերջնական վճիռ:
Պատմվածքն ուշագրավ է կառուցվածքային առումով: Այն ունի ներքին երեք ընդգրկումներ՝ Համբարձումի կյանքի հայրենական ու տարագիր շրջանները և գրողի ներկա կյանքի տվայտանքները: Չնայած պատմվածքի այս փուլայնությանը, կարմիր թելի նման անցնում է գերագույն մի միտք՝ հայության

օրհասական կացությունը և ելման ճանապարհի որոնումը, որ նշանակում է նաև ճանապարհի որոնում,քանի որ նա, ով նպատակ ունի , արդեն ճանապարհի վրա է: Պայմանով, որ այդ ճանապարհը պետք է դեպի վեր տանի:
<<Հարալեզներուն դավաճանությունը>> պատմվածքում առկա ներքին խոկումները, կերտվող տեսիլների բազմազանությունը, ոճային հարստությունները այս գործն առանձնացնում են մյուսներից:ԵՎ բոլորովին էլ պատահական չէ, որ Վ.Թեքեյանը սա պոեզիային համարժեք գործ է համարել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շահան Շահնուրի գրական ժառանգությունը, իհարկե, ամբողջական չի արտացոլում ժամանակաշրջանի ողջ պատկերը կամ գրական ընդգրկումները, բայց ասում ու հուշում է շատ բան:Այդ գրականությունը ոչ միայն ճանաչողական, այլև պատմական արժեք ունի և մի անփոխարինելի *վավերաթուղթ* է 20-րդ դարի մեր ազգային բարդ ու հակասական կյանքի մասին, այն հույզերի ու մտորումների, որի հանգույցներում ապրում է գաղթի ճամփաներում դեգերող մեր ժողովրդի մի հսկայական մասը, որ սփյուռք անունն

է կրում (Ա.Ավագյան, <<Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի>>, էջ 266):

<<...Մեր համեստ, շատ համեստ ստեղծագործություններէն վեր կայ բան մը, բուն իսկ Հայ ժողովուրդը և անոր շահը>>,- գրել է Շահնուրը <<Սփյուռք>> շաբաթաթերթում:Այդ <<շահին>> գրողը զոհաբերեց ամեն ինչ՝ ժամանակ, առողջություն, համբավ՝ միշտ գտնվելով կրակի կողքին կամ կրակի մեջ: Նա եղավ ու մնաց այն <<մանուկը>>, որի սրտից, ինչպես գրել է <<Ամեն ինչ և ոչինչ>> հոդվածում, <<կը հոսի այն տաք արցունքը, որ պատճառ չի ճանչնար, և որուն պատճառը ամէն ինչ է:Որ շատ անգամ չի հոսիր,բայց որ ներսէն կերթայ արիւնի պէս>>:

Շահնուր գրողի մնայուն արժեքներից է այն, որ իր ապրած օրերի բազում փլուզումների միջից նա տեսավ պատմական ժամանակաշրջանի ամենահրատապ ու հիմնական խնդիրը՝ ազգի սպառման գահավեժ ընթացքը՝ ձուլումը, և մատնանշեց այդ անկման պատճառներից մի քանիսը, որոնք առնչվում էին սեփական թերություններին, սխալներին ու ճակատագրական վրիպումներին: Ձուլման վտանգը համարելով ամենամեծ հիմնախնդիր՝ Շահնուրը, շարունակելով Պարոնյանի որոշ մտայնություններ, ժողովրդի ապրելու հեռանկարի ուրույն դրույթներ է առաջադրում՝ մոտենալով Խորենացու, Աբովյանի, Չարենցի արտահայտած ծրագրային գաղափարներին. ապրելու ու հաղթելու համար կռվել է պետք, ընդվզել է պետք, ազգային ինքնաճանաչում է պետք, սեփական սխալներից ձերբազատում է պետք:

Օգտագործված գրականություն

Ա. Ավագյան <<Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի>>

Վ.Շուշանյան <<Ցայգերգ>>, <<Հայրենիք>> ամսագիր, Բոստոն, 1925,Գ տարի N12

Ն.Ակիշյան <<Շահան Շահնուր.Կեանքը և գործը>>, Լոս-Անջելես, 1982, էջ 100

Ժ.Դանիելյան, Բանասիրական որոնումներ, Պեյրութ, 1996, էջ 266